ՍԻՄԵՈՆ ՐԱԲՈՒՆԱՊԵՏ ՏԱԹԵՎԱՑԻՆ
ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՁԱԳԱՎԱՆՔՈՒՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ Ռ. Ռ.

Ձագավանք կամ Գետարգելի Սբ. Նշան վանքը գտնվում է պատմական Կոտայք գավառի Ձագ գյուղի հարավարևելյան բլրալանջին՝ ներկայիս Կոտայքի մարզի Առինջ գյուղից 2 կմ հյուսիս-արևելք: Գյուղի տեղադրության վերաբերյալ Ղևոնդ Ալիշանը նշում է. «մերձ ի Մէհուպ ի հարաւոյ կուսէ և յարևելից Պտղօնից-մղոնաւ կամ դոյզն ևս հեռի, առ եզերբ Գըրգուլագայ յահեկէն, կայ միւս անուանի գիւղ առ Հինս՝ Ձագ»[1]: Նա գյուղը հաճախ հիշատակում է «Ձագավանաց գիւղ» ձևով, իսկ վանական համալիրը՝ «Ձագավանքի սուրբ Նշան» անունով՝ կապված այստեղ պահվող Գետարգելի հռչակավոր հրաշագործ խաչի սուրբ մասունքի հետ. «անդ հանգուցանելոց զգերահռչակ Գետարգել խաչն, որպէս յիշի ի պատմութեան նշանին»[2]: Վանքը վիմագրերում հիշվում է նաև «Գետադարձի Սբ. Նշան» կամ «Գետարգելի Սբ. Նշան» անունով: Այն ինչպես անցյալում, այնպես էլ այժմ հայտնի ուխտատեղի է: Գյուղը մեծ ճանաչում է ստացել մենաստանի շնորհիվ: «Գետարգել-Գետադարձ» անվանումն անշուշտ խարսխված է սուրբ խաչի միջոցով Պետրոս Ա Գետադարձ (1019-1054) հայոց կաթողիկոսի արարած հրաշագործության ավանդության վրա, որի պատմությունը հետևյալն է. 1021-1022 թթ. Տրապիզոնում, հայ-բյուզանդական բանակցությունների ժամանակ Պետրոս կաթողիկոսը կայսր Վասիլ Բ-ի հետ կնքում է մի պայմանագիր, որի համաձայն Հովհաննես-Սմբատ Բագրատունի թագավորի մահից հետո Անին անցնելու էր բյուզանդական կայսրությանը: Այդ անցքերին քաջատեղյակ Արիստակես Լաստիվերտցին սրտի ցավով գրում է, թե «անդ եղև Հայոց կորստեան գիր և նամակ»[3]: 1022 թ. հունվարի 6-ին՝ Աստվածահայտնության տոնի օրը, կաթողիկոսը կայսեր և նրա մետրոպոլիտների ներկայությամբ ջրօրհնեքի արարողություն կատարելիս «ի ձեռն Սուրբ Նշանին» (Խաչի՝ «գետ արգել սբ. Նշանն» զորությամբ) կատարում է հրաշագործություն՝ կանգնեցնում, արգելում, հետ է դարձնում «զջուրն յորդահոս գետոյն հզաւրի արգելեաց յաշխարհն Յունայ ի ձեռն Սուրբ Նշանին»[4]: Ինչպես Լաստիվերտցին է նկարագրել, «Ի յեղուլ հայրապետին զտէրունական իւղն ի ջուրսն, ցնցուղս լուսոյ ճառագայթից յանկարծակի ծագեաց ի ջուրցն զոր տեսին առ հասարակ ամենեսեան, և փառաւորեցին զԱստուածս և բարձրացաւ եղջիւր հաւա-

---

[1] **Ալիշան Ղ.**, Այրարատ Բնաշխարհ Հայաստանեայց,Վենետիկ,1890, էջ 291:

[2] Նույն տեղում, էջ 291: Գետարգելի Սուրբ Խաչը՝ «ոսկեայ ակնակուռ զարդարուած, գտնուում է էջմիածնայ թանգարանի մէջ, որ գործ է դրւում Մեռոնօրհնութեան ժամանակ», Կ. Կոստանեանց, Հայոց վանքերը, 1886, էջ 79:

[3] Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխ. Կ. Ն. Յուզբաշյանի, Ե., 1963, էջ 31-32:

[4] Տե՛ս Մատենադարան, ձեռ. N 4505, թ. 70:

տոյս մերոյ»[5]: Ժողովրդական այս պատումը, անշուշտ, ստեղծվել է մատենագիրների կողմից՝ փառաբանելով քրիստոնեական մեր հավատամքը՝ մեծարելով հայ եկեղեցու և նրա հովվապետի հեղինակությունը:

Մենաստանը եղել է միջնադարյան Հայաստանի Այրարատյան աշխարհի նշանավոր կրոնական, գիտակրթական և մշակութային կենտրոններից մեկը:

Զագավանքի վանական միաբանության պատմությունը 1423-1424 թթ. մինչև 1428 թ. սերտորեն առնչվում է ժամանակի մեծ մտածող, հոգևոր ու կրթական գործիչ, բաբունապետ, հմուտ գրիչ, ձեռագրերի պատվիրատու Սիմեոն Տաթևացու գործունեության հետ: Վարդապետը հիշատակարաններում անվանվում է «Ամենագովելի և աստուածահաճոյ, սուրբ և քաջ հռետորն և արիաջան բաբունապետն, զմեծ վարդապետն մեր քաջ եկլեստիատէս Հայոց, որ փայլէր ի մէջ եկեղեցւոյ իբրև զարեգակն»[6]: Պատանի Սիմեոնը ուսանել է ծննդավայրի՝ Տաթևի հոգևոր կրթօջախում: 1400 թ. ընդօրինակված մի ձեռագիր հիշատակարանի համաձայն՝ «աշակերտ» Սիմեոնը սարկավագ Երեմիայի գլխավորությամբ ընդօրինակում է «աստուածային գանձարանս, որ կոչի Մաշտոց»[7]՝ առաջնորդության «ուխտիս քաջ և արի հսկողի Գրիգորի Տաթևացւոյ»[8]: Նա շատ պատկերավոր նկարագրել է ժամանակի դժվարին իրավիճակը. «անիշխանութեան աշխարհիս Հայոց, որում ի մեծ վտանգի կային քրիստոնեայք ի ձեռն այլազգեաց»[9]: Ամենայն հավանականությամբ, ուսումնառության շրջանում Սիմեոնն աչքի է ընկել իր գրագիտությամբ և դրանով գրավել Գրիգոր Տաթևացու ուշադրությունը: Մեկ այլ հիշատակարանում՝ «Քաղուածոյ լուծմունք Սաղմոսաց Գրիգորի Տաթևացւոյ», գրիչ Սիմեոնը նշված է որպես մեծանուն իմաստասեր Գրիգոր Տաթևացու սան: Նա մեծ ակնածանքով է խոսում իր ուսուցչի մասին. «Ի թվիս հայոց ՊԾԶ(1406 թ.) ի սբ, աթոռս Եւստաթէի սբ. առաքելոյս, ձեռամբ բազմամեղ և սուտանուն Սիմէոնի պիտակ բանասիրի, աշակերտի նորին Գրիգորի վեհափառ՝ առնողի գրոյս»[10]:

1409 թ. «ի վրդովմանց վերին աշխարհին» Գրիգոր Տաթևացին, վերցնելով իր տասներկու աշակերտներին, գնում է Քաջբերունյաց երկրի Սուրբ Մեծոփա վանք: Այդ աշակերտների թվում է նաև Սիմեոն բաբունապետը. «վարդապետք Մխիթար Տաթևոյ, Յովանէս ի վանիցն Հերմոնի, Գալուստ ի Վաղընդու, Սիմէոն ի Սիւնեաց, Գրիգոր Արարատեան»:[11] Հավանական է, որ Սիմեոնը երկար չի մնացել Մեծոփա

---

[5] **Արիստակես Լաստիվերտցի**, էջ 31, 32, **Ղանալանյան Ա.,** Ավանդապատում, Ե., 1969, էջ ՃԶ. Պետրոս Գետադարձ կաթողիկոսի մասին ստեղծված վերոհիշյալ զրույցի կապակցությամբ Ա. Ղանալանյանը գրում է, որ այստեղ «այլափոխված ձևով արձագանք են գտել կրոնական այն հալածանքները, որոնք կիրառվել են բյուզանդական կայսրերի կողմից հայերի նկատմամբ»:

[6] ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմ. **Խաչիկյան Լ. Ս.,** Ե., 1953, էջ 561:

[7] ԺԴ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ. **Խաչիկյան Լ. Ս.,** Ե., 1950, էջ 632:

[8] Նույն տեղում, էջ 632:

[9] Նույն տեղում:

[10] ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 59:

[11] Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, կազմ. Հակոբյան Վ. Ս., Ե., 1956, էջ 352:

վանքում: Մեկ այլ ձեռագիր հիշատակարանում նա ողբում է ուսուցչի մահը՝ ասելով. «Յիշատակ քո աւրհնութեամբ եղիցի՝ սուրբ Հայր, որ յայսմ ամի վերափոխեաց զքեզ Քրիստոս ի դասս երջանիկ վարդապետաց և մեզ՝ ազգիս Հայոց մեծ սուգ եղն»[12]: Նա իր ուսուցչի մահից հետո՝ 1410-1411 թթ., թողնում է Տաթևի հոգևոր կրթօջախը և գալիս Այրարատ աշխարհ, ուր ստանձնում է Եղվարդի Սուրբ Նշան անապատի դպրոցի ուսուցչապետի պաշտոնը: Այդ կրթօջախի հովանավորներն էին «աստուածասէր, բարեպաշտ, ազատածին Ազիզպէկը»[13] և իր որդիներ Ավագն ու Զաքարիան: Այրարատ նահանգում կային Սուրբ Նշան անվամբ բազմաթիվ եկեղեցիներ, ինչպես օրինակ՝ Հովհաննավանքում, Սաղմոսավանքում, Այրիվանքում, Զագավանքում և Եղվարդում (եռահարկ տաճարը):

Ինչպես գրում է Ղ. Ալիշանը, Սիմեոնը, թողնելով Տաթևի հոգևոր հաստատությունը, բնակվել է «աստուածաշէն և ի տիրախնամ գեղն Եղիւարդ, ի փոքր վանս»[14]: Հիշյալ անապատում բաբունապետ Սիմեոնի անմիջական ղեկավարությամբ Թումա գրիչն ավարտում է «Մեկնութիւն սաղմոսաց Գրիգորի Տաթևացւոյ» աշխատության ընդօրինակումը, որի հիշատակարանում կարդում ենք. «աւարտեցաւ յանապատս, որ կոչի սուրբ Նշան առ ոտս նորաբողբոջ բաբունապետիս, որ կոչի Սիմեոն»[15]: Ըստ Գ. Հովսեփյանի՝ Սիմեոն բաբունապետի գործունեությունը Եղվարդի հոգևոր կրթօջախում տևել է 1394-ից մինչև 1414 թվականը[16]: Երկրորդ անգամ անդրադառնալով բաբունապետի գործունեությանը (այս անգամ Այրիվանքում)՝ հեղինակը նշում է ևս մեկ ժամանակահատված. «Աւելի իրազեկ ենք նորա տասնամեայ գործունէութեան Եղուարդում 1404-1414»[17]: Վերոհիշյալ մատենագրական վկայությունների ուշադիր քննությունը հնար չի տալիս միանշանակորեն ընդունել անվանի գիտնականի առաջարկած թվագրությունը[18]: Ուսումնասիրողներից Ս. Սաղումյանը կարծում է, որ Սիմեոնն ուսուցչապետ է դարձել 1406 թ. ոչ շուտ, և որ տասնվեցամյա պատանին չէր կարող ստանձնել Եղվարդի դպրոցի բաբունապետի պաշտոնը[19]: 1400 թ. ընդօրինակված «Մաշտոցի» հիշատակարանի վկայությամբ Սիմեոն Տաթևացին աշակերտական առաջին քայլերն անում է Տաթևի կրթօջախում՝ սարկավագ Երեմիայի վերահսկողությամբ հմտանալով գրչության արվեստում: Իսկ «Գիրք հարցմանց Գրիգորի Տաթևացւոյ» ձեռագրում Սիմեոնը հիշված է որպես սպասավոր-աշակերտ: Տվյալ հիշատակարանի գրիչներն են Սիմեոն Տաթևացին և Գալուստ վարդապետը. «Ի

---

[12] ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 109:

[13] Նույն տեղում, էջ 561, **Ալիշան Ղ.**, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 569:

[14] Նույն տեղում, էջ 561, **Ալիշան Ղ.**, նույն տեղում, էջ 569:

[15] Նույն տեղում, էջ 561, **Ալիշան Ղ.**, նույն տեղում, էջ 569:

[16] **Յովսէփեան Գ.,** Ազիբեկեանք և նրանց շինարարական գործը, (Պատմա-Հնագիտական ուսումնասիրութիւն), Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, Գիրք Ա և Բ, 1921-1922, էջ 194:

[17] **Յովսէփեան Գ.,** Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, մասն երկրորդ, Երուսաղէմ, 1942, էջ 120-122:

[18] ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 57-58:

[19] **Սաղումյան Ս.,** Սիմեոն բաբունապետ Տաթևացի (ՀՀ ԳԱԱ, Լրաբեր, 1975, N 6, էջ 77-89): Փաստենք, որ Սիմեոնի բաբունապետ դառնալու տարեթիվը ստույգ հայտնի չէ:

թուաբանութեան Հայոց Մեծաց ՊԾԲ (1403) մեք աշակերտք բանի՝ Սիմէոն սպասաւոր և Գալուստ պիտակ վարդապետ»[20]: Վարդապետական տիտղոսով է հիշվում նաև «Քաղուածոյ Լուծմունք Սաղմոսաց Գրիգորի Տաթևացւոյ» ձեռագրում. «ի թուիս ՊԾԵ Սիմէոն բազմամեղ վարդապետի»[21]: Այս վկայություններից կարելի է եզրակացնել, որ Սիմեոնին բաբունապետության կոչում է շնորհվել 1403-1406 թթ. ընկած ժամանակահատվածում: Գրիչ Հովհաննես Մոկացու ընդօրինակած «Գիրք Հարցմանց Գրիգորի Տաթևացւոյ» ձեռագրի վկայությամբ Սիմեոնը վարդապետ տիտղոսով հիշվում է Հունան աշակերտի հետ, որից հետևում է, որ նա ուսուցչապետական գավազան և հոգևոր տիտղոս ստացել է ավելի վաղ՝ մեկ կամ երկու տարի առաջ: Նա քաջահմուտ է եղել գրչության արվեստի և բանասիրության մեջ, ուստի նրան վստահել են աշակերտ ունենալու և ուսուցանելու պատասխանատու գործը: Այդ տիտղոսով բաբունապետը երկիցս հիշվում է «Քաղուածոյ լուծմունք սաղմոսաց Գրիգորի Տաթևացւոյ» հիշատակարանում. «զապիկար և զտրուպ գծողս զՍիմէոն մեռեալ ոգի վարդապետ» ու «ողորմեա ստացողի և գրողի սորին Սիմէոն մեռեալ ոգի վարդապետ»[22]: Տաթևի դպրատանը Սիմեոնը ոչ միայն ուսանել է, այլ նաև հմտանալով գրչության արվեստի մեջ՝ մեծ համբավ է ձեռք բերել և անգամ ունեցել է հետևորդ աշակերտ. «Հայոց ՊԾԵ. Ես Սիմէոն վարդապետն և զՅունան աշակերտն, որ զօրինակն մեզ շնորհեցին»[23]:

Ս. Սաղումյանը այն կարծիքն է հայտնել, թե Սիմեոնը Եղվարդի հոգևոր դպրոց պետք է եկած լինի 1410 թվից ոչ շուտ: Հենվելով 1444 թ. մի հիշատակարանի «ամս տասն» արտահայտության վրա՝ հեղինակը կարծում է, որ Սիմեոն Տաթևացին Եղվարդի կրթօջախում վարդապետական գործունեություն է ծավալել մինչև 1420 թվականը[24]: Համամիտ ենք հեղինակին, քանզի հիշատակարանի «առ ոտն նորաբողբոջ բաբունապետիս» արտահայտությունը, մասնավորապես «նորաբողբոջ» որոշչի առկայությունը, թույլ է տալիս ենթադրելու, որ Սիմեոնը ոչ վաղ անցյալում պետք է ստացած լիներ «բաբունապետի» կոչումը: Եղվարդի հոգևոր դպրոցում նա ուսուցանում էր քերականություն, պատմություն, գրչության արվեստ և «զհինն և նոր մատեան աստուածաշունչ գրոց, զնուրբ և զարտաքին փիլիսոփայութիւն, ամս տասն»[25]: 1413 թ. «նորաբողբոջ» բաբունապետ Սիմեոնի մոտ՝ Եղվարդի հոգևոր կրթօջախում, գրիչ Հովհաննես Երզնկացին ավարտում է «Մեկնութիւն սաղմոսաց և Մատթէոսի աւետարանին Գրիգորի Տաթևացւոյ» աշխատության օրինակումը, որը նախաձեռնել էր «մասն ինչ Եւստաթէի, մասն ինչ ի վանս Հերմոնի, առ ոտս բաբունուն Յովհանիսի, և մասն ինչ ի վանս Եղևարդեայ»[26]: Հաջորդ 1414 թ. նույն Հերմոնի վանքում Գրիգոր գրիչը սկսում է «Գիրք հարցմանց Գրիգորի Տաթևացւոյ» ձեռագրի ընդօրինակումը, որն ավարտում է «ի գաւառս Արարադեան,

[20] ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 33-34:
[21] Նույն տեղում, էջ 59:
[22] Նույն տեղում, էջ 58, 59:
[23] Նույն տեղում, էջ 58:
[24] **Սաղումյան Ս.**, նշվ. աշխ., էջ 77-86:
[25] ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, , էջ 561:
[26] Նույն տեղում, էջ143:

ի գեղաքաղաքս յԵղիվարդ, ի վանքս սուրբ Յակոբ, առ ոտս երջանիկ պետին Սիմէոն ռաբունի»[27]:

1415 թ. Սիմեոն ռաբունապետն այցելում է Հերմոնի դպրեվանք, որը հայտնի էր որպես գրչության մեծահամբավ կենտրոն, և գրիչ Գրիգորին պատվիրում օրինակել «Մեկնութիւն երկոտասան մարգարէից Նէրսիսի Լամբրոնացւոյ» աշխատությունը[28]: Սիմեոնը մտադրվում է այցելել սուրբ քաղաք՝ Երուսաղեմ: Թե որ թվականին է նա մեկնել Երուսաղեմ, ստույգ հայտնի չէ: 1419 թ. Եղվարդի Սբ. Հակոբ վանքում «ի շատակ սրբասնեալ կրօնաւորի Սիմէոնի սպասաւորի բանի» Բարսեղ գրիչը ընդօրինակել է երկու ձեռագիր՝ «Քարոզգիրք Գրիգորի Տաթևացւոյ» և «Բառգիրք»: Սույն հիշատակարանները վկայում են, որ այդ թվականին Սիմեոնը գործում էր Եղվարդում: Հավանաբար, 1420-1421 թթ. նա գնում է Երուսաղեմ և վերադարձին տկարության պատճառով բնակություն հաստատում «մեծափառ ուխտն Այրիվանս»[29]: Մեծ «յուսով և եռափափագ սիրով» ռաբունապետը սկսում է նորոգել և զարդարել «զվանորայս Արարատեան նահանգիս»[30]:

Ա. Մովսիսյանը, հետևելով Գ. Հովսեփյանին, գտնում է, որ ռաբունապետը, ավարտելով Տաթևի «բարձր դպրոցը», ստացել է վարդապետական աստիճան և գնացել Այրիվանք՝ դասավանդելու: Հեղինակի կարծիքով, «մինչև երկրորդ անգամ Տաթև գնալը, Սիմեոնը եղել է Այրիվանքում, որից հետո գնացել Տաթև իր ուսումը կատարելագործելու»[31]: 1444 թ. ընդօրինակված Յայսմավուրքի հիշատակարանի «դարձեալ եկն» արտահայտությունը Ա. Մովսիսյանն ընկալել է «կրկին եկավ», մինչդեռ պետք է լիներ՝ «դարձավ եկավ, հետ եկավ, վերադարձավ»[32]: Հարցը փակված կհամարվեր, եթե մեծանուն հայագետ Հր. Աճառյանը, որից, անշուշտ, օգտվել է Ա. Մովսիսյանը, չգրեր, թե «Սիմէոն վարդապետ Այրիվանեցին 10 տարի ուսուցանում էր Եղվարդի փոքր վանքում, ապա եղավ առաջնորդ Այրիվանքի, գնաց Երուսաղէմ ուխտի, վերադարձին մի ժամանակ նստավ Այրիվանքում»[33]: Վերը նկատեցինք, որ 1400 թ. մինչև 1409 թ. Սիմեոնը գտնվում էր Տաթևի հոգևոր դպրատանը: Համաձայն Յայսմաւուրքի՝ նա «ուշ եդեալ գնալ յաստուածակոխ սուրբ քաղաքն Երուսաղէմ՝ տեսանել և երկիր պագանել սուրբ տնօրինականացն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ի ճանապարհի տկարութիւն պատահեալ՝ դարձեալ եկն բնակեցաւ ի մեծափառ ուխտն յԱյրիվանս»[34]: Արդյոք Սիմեոն Տաթևացին ուսումնառության տարիներին՝ 1400-1403 թթ. հետո, եկել է Այրիվանք՝ ուսուցչական գործունեությա՞ն, և ապա նորից վերադարձել Տաթև՝ ուսումը

---

[27] Նույն տեղում, էջ 163:

[28] **Ալիշան Ղ.**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 125, ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 163:

[29] ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 561:

[30] Նույն տեղում, մասն Ա, էջ 560, **Ալիշան Ղ.,** Հայապատում, էջ 569:

[31] **Մովսիսյան Ա. Խ.**, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (X-XV դդ.) Ե., 1958, էջ 267-270:

[32] **Աճառյան Հր.**, Հայերենի արմատական բառարան, հ. Ա-Դ, Ե., 1971, էջ 639:

[33] **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., հ, Դ, Ե., 1948, էջ 509:

[34] ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 560-562:

շարունակելո՞ւ, հայտնի չէ: Ինչպես վերը նկատեցինք, Սիմեոն Տաթևացին ուսումնառության ընթացքում այնպես է հմտանում գրչության արվեստում, որ համալսարանի վերատեսուչ Գրիգոր Տաթևացին նրան հանձնարարում է օրինակել, և հենց ինքն էլ ստացողն է «Քաղուածոյ լուծմունք Սաղմոսաց Գրիգորի Տաթևացւոյ» ձեռագրի: Ակադ. Լ. Ս. Խաչիկյանը, համառոտ նկարագրելով Սիմեոն բաբունապետի կյանքն ու գործունեությունը, նկատում է, որ նա «սովորել է Տաթևում և 1403, 1406 թթ. այնտեղ օրինակել երկու ձեռագիր, իսկ 1415-1419 թթ. դասավանդել է Եղվարդի վանքում»[35]: Հեղինակի վերջին եզրահանգմանը չենք կարող համաձայնել, քանի որ, ինչպես վերը նկատեցինք, իրողությունը փոքր-ինչ այլ է:

Այրիվանքում բաբունապետի առաջին գործն է լինում իսկույն վերականգնել «զամենայն կարգս և զսահմանս ուղղեաց ըստ առաջին սուրբ հարցն»: Եկեղեցու արարողակարգում նա սահմանում է «անխափան կատարել զաստուածային պատարագն ի շաբաթ և ի կիրակէի, և ասել ՃԾ սաղմոս Դաւթի»[36]: Միայն Ղ. Ալիշանն է հիշատակում, որ Այրիվանքում բաբունապետը եղել է վանքի առաջնորդ. «առաջնորդն Այրիվանից»[37]: Ցավոք, մեծանուն հայագետը չի նշում, թե ինչ աղբյուրից է քաղել այս վկայությունը:

Գ. Հովսեփյանը Սիմեոնին ծնունդով համարում է Տաթևից, բայց նկատում է, որ բաբունապետի «Այրիվանեցի» մականունը փաստում է նրա՝ Այրիվանքում ստեղծագործական արգասաբեր գործունեության ծավալման մասին: Հիշյալ մենաստանում անժխտելի են բաբունապետի մեծածավալ աշխատանքները: Նա այնտեղ օրինակել է մի «պատուական» Աստվածաշունչ, մի Տոնական և մի Ցայսմավուրք[38]: Դավիթ Բաղիշեցու ժամանակագրության (XVII դ.) մեջ Սիմեոն բաբունապետը հիշվում է «Սիմէոն ի Սիւնեաց» ձևով[39]: Ս. Սաղումյանը, ելնելով 1444 թ. հիշատակարանի վկայությունից՝ «կեցեալ սուղ ինչ ժամանակ (Այրիվանքում - Ռ. Գ.), ապա եկեալ բնակեցաւ ի սուրբ ուխտն Զագավանք», գտնում է, որ այս հանգամանքն ամենևին թույլ չի տալիս բաբունապետին կոչելու Այրիվանեցի կամ Այրիվանքի ուսուցչապետ[40]: XV դ. սկզբին Զագավանքում բուն էին դրել բազմաթիվ «անկարգութիւն և անօրինութիւն»: Միաբանության սպասավորները, մոռանալով սաղմոս ու շարական, տարվել էին աշխարհիկ գայթակղություններով[41]: Նույն 1444 թ. հիշատակարանի վկայությամբ Կոտայք գավառում Սիմեոն բաբունապետը վճռականությամբ ձեռնամուխ է լինում վերստին վերականգնելու «զամենայն սահմանս և զկարգս վանիցն ուղղեաց ըստ առաջնոցն», «ամենայն բարի կարգս և

---

[35] Նույն տեղում, էջ 784:

[36] Նույն տեղում, էջ 560:

[37] **Ալիշան Ղ.,** Այրարատ, էջ 197:

[38] **Յովսէփեան Գ.**, Ազիբեկեանք և նրանց շինարարական գործը, էջ 194:

[39] Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, էջ 352:

[40] **Սաղումյան Ս.**, նշվ. աշխ., էջ 85:

[41] ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 562, **Ալիշան Ղ.,** Հայապատում, էջ 569-570:

օրէնս», ինչպես կային «ի սահմանաց և ի կրօնից յառաջին»՝ կյանքի կոչելով «զպայծառ ջահն հաւատոյ և զանդրդուելի սիւն եկեղեցւոյ»[42]:

Ըստ Ս. Սաղումյանի՝ Սիմեոն Տաթևացին Ձագավանք պետք է եկած լինի 1425-1426 թթ., որովհետև 1425 թ. ընդօրինակված ձեռագիր հիշատակարանի տեղեկատվությամբ Ձագավանքի առաջնորդն էր տեր Դավիթը[43]: Թեև ուսուցչապետի գրիչն ավելի բեղմնավոր է Այրիվանքում, որով պատմության մեջ նա հորջորջվում է նաև «Այրիվանեցի» մականունով, այնուամենայնիվ, ըստ վերոհիշյալ հիշատակարանի, գիտնականն այնտեղ ապրել է «սուղ ինչ ժամանակ»: Ուստի կարծում ենք, որ Սիմեոն Տաթևացին ավելի վաղ է տեղափոխվել Ձագավանք: Ըստ այդմ էլ նրա ձագավանյան տարիներն ավելի երկար են տևել՝ մինչև 1428 թ. մահկանացուն կնքելը: Հավանական է՝ Սիմեոն րաբունապետը թե՛ Այրիվանքում և թե՛ Ձագավանքում վանահոր պաշտոն չի վարել, քանի որ 1427թ. գրված «Ժամագիրք և Պատարագամատոյց»-ի հիշատակարանում՝ Ձագավանքի առաջնորդ է հիշվում Սարգիս վարդապետը[44]: Այդ տարիներին, ապրելով և ստեղծագործելով Ձագավանքում, Սիմեոն րաբունապետը ձեռնարկում է մի շարք գործեր: Նա 1426 թ. Անիի Հովհաննես եպիսկոպոս գրիչին պատվիրել է օրինակել մի «Աստուածաշունչ»[45]:

1427թ. Ձագավանքում Սիմեոն Տաթևացին ավարտում է մի «Յայսմաւուրք» և նվիրում Հովհաննավանքի Սուրբ Կարապետ եկեղեցուն: Այդ առիթով Հովհաննավանքի եկեղեցու ավագ խորանի պատին փորագրված է րաբունապետի հիշատակը հավերժացնող վկայագիր, ուր րաբունապետը պատգամում է. «Որքան իմ գիրքս կայ հանապազ զայս կարդան ի յատենիս»[46]: Արձանագրության բովանդակությունից դատելով՝ Ս. Սաղումյանը եզրակացնում է, որ հիշատակագրի տեքստը կազմել է հենց նվիրատուն՝ Սիմեոն րաբունապետը[47]: Վիմագրում նա համեստաբար հանդես է եկել «պիտակ» մականունով. «ԹՎ. ՊՀԶ շնորաւք սբ երրորդութեն ես պիտակ վարդապետ Սիմէոն, ընծաեցի զիմ նորընծա Այսմաւուրքս սբ.Կարապետիս վասն փրկութեն հոգոյ իմոյ»[48]: *Պիտակ* ածականը նույն իմաստն ունի, ինչ *տրուպ* բառը, որը նշանակում է փոքր, նվաստ, կրտսեր, հետին[49]: Հնագետ-վիմագրագետ Կ. Ղաֆադարյանը վերծանել և հրատարակել է սույն նվիրատվական վավերագիրը՝ շտկելով նախորդ հրատարակիչների անճշտություններն ու բացթողումները: Հեղինակն անձնանունների ցանկում ռաբունապետին Այրիվանեցի է կոչել[50]: Նմանատիպ նվիրատվական մի արձա-

---

[42] ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 562:

[43] Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, էջ 352:

[44] ԺԵ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Ե., էջ 336:

[45] Նույն տեղում, էջ 355: Այս հիշատակարանն անթվական է, և Լ.Ս.Խաչիկյանը այն տեղադրել է «նույն Յովհաննէս եպիսկոպոսի 1426 թ. հիշատակարանին առընթեր»:

[46] **Ղաֆադարյան Կ.**, Հովհանավանքը և նրա արձանագրությունները, Ե., 1948, էջ 59:

[47] **Սաղումյան Ս.,** նշվ. աշխ., էջ 84:

[48] **Ղաֆադարյան Կ.,** նշվ. աշխ., էջ 59:

[49] **Ավագյան Ս.,** Վիմական արձանագրությունների բառաքննություն, Ե., 1978, էջ 56-57:

[50] **Ղաֆադարյան Կ.,** նշվ. աշխ., էջ 64:

նագրություն է պահպանվել նաև Գեղարդավանքում՝ Պապաքի վիմափոր ժամատան հարավարևելյան սյան վրա. «Սուրբ Նշան տէրունական Սիմէոն վարդապետին լեր պահապան, Հոգւոյ նորա պատսպարան...»[51], որի տեքստը նման է նախորդին, սակայն դժվար է հետևեցնել, թե այն նույնպես կազմել է բաբունապետը:

Զագավանքի հոգևոր և կրթամշակութային կենտրոնում Սիմեոն բաբունապետը կատարում է մի շարք վերափոխումներ: Առաջինը՝ խստագույնս բացառում է մենաստանում ազգակցական, խնամիական կապերի դրսևորումը: Երկրորդ՝ քահանաներին արգելում է կրել զանազան հագուստներ, որոնցով նրանք դարձել էին «իբրև այլ ազգի»: Աբեղաներին, որոնք մոռացել էին հոգևոր ուսմունքը, թողել վանքն ու մենաստանը և գիշերում էին իրենց գյուղերում, իբրև «կանոնս և օրէնս» վճռականապես պարտադրում է բնակվել վանքում իրենց հանդերձանքով՝ «բրդեղէն, մաշկեղէն կամ մազեղէն՝ ըստ առաջնոյն»[52]: Բաբունապետը «աստուածային վարդապետութեամբ» սաստում և հանդիմանում էր տգետ ու անխրատ վանականներին, խրախուսում ու գովաբանում բանիմաց հոգեվորականներին: Արգելում է «սանամոր ու մայրաքրոջ» ներկայությունը վանքում, խստացնում միաբանության առօրյան: Նրա արգասաբեր գործունեության մասին է վկայում ձեռագիր հիշատակարանը. «եբարձ զամենայն խռովութիւն ի տանէ աստուծոյ»[53]: Սիմեոն բաբունապետը պարսպապատում է վանքը: Միաբանների համար կառուցում է սեղանատուն: Վանքի շրջակայքում մենաստանի սպասավորների համար կառուցում է քնարաններ՝ «ամառան և ձմռան» համար: Պարսպի ներսում պատվիրում է կանգնեցնել հինգ մեծամեծ խաչքարեր, որոնք այժմ խոնարհված են և ջարդված: Մեծանուն բաբունապետը ցանկացել է նաև կառուցել մի եկեղեցի, որը, ցավոք, չի իրականացրել մահվան պատճառով[54]: Սիմեոն բաբու-նապետի դամբարանը գտնվում է Զագավանքում, որի վրա այսօր կառուցվել է կոպտատաշ քարերով մի շինություն: Հնավայրում նրա անվամբ կանգնեցվել է նաև մի խաչքար, որի հողմահարված զարդաքանդակները հիշեցնում են կատարողական բարձրարվեստ վարպետության մասին: Խաչքարը նախկինում պետք է որ դրված լիներ հանգստարանին՝ տապանաքարին կից, սակայն այսօր տեղահանված է և գտնվում է VII դարի Սուրբ Նշան եկեղեցու մուտքի մոտ: Այն կեսից վեր կոտրված է: Կոթողի վարդյակից ներքև փորագրված է երկտող հանգավոր արձանագրություն.

Ս[ՈՒՐ]Բ ՆՇԱՆՍ Տ[Է]ՐՈՒՆԱԿԱՆ: ՏԻՊ ԵՒ ՊԱՏԿԵՐ ԱՆԵՂԱԿԱՆ ՍԻՄԷՈՆ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻՆ ԼԵՐ ՔԱՎԱՐԱՆ: ԹՎ[ԻՆ] ՊՀԷ (1428)[55]:

---

[51] **Ցովսեփյան Գ.,** Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, մասն երկրորդ, Երուսաղէմ, 1942, էջ 120-122, **Ալիշան Ղ.,** Այրարատ, էջ 342: Արձանագրությունը թվական չունի և ըստ Ս. Սաղումյանի՝ «ժամանակը պետք է համարել 1420-ական թվականների առաջին կեսը» (**Սաղումյան Ս.,** նշվ. աշխ., էջ 83):

[52] ԺԵ դարերի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, մասն Ա, էջ 561, **Ալիշան Ղ.,** Հայապատում, էջ 569:

[53] **Ալիշան Ղ.,** Հայապատում, էջ 561-569:

[54] ԺԵ դարերի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, մասն Ա, էջ 562:

[55] **Սաղումյան Ս.,** նշվ. աշխ., էջ 86:

Երկթեք տապանաքարի վրա վայելչագիր մեծաղիր տառերով, բազմաթիվ կցագրերով փորագրված է մեկ տող արձանագրություն.

[Ա]Յ[Ս] Է ՀԱՆԳԻՍՏ ԵՒ ՎԵՄ ԻՄԱՍՏՈՒՆ ՔԱՋ ՍԻՄԻՈՆ

ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻՆ, ԹՎ[ԻՆ] Պ[ՀԷ] (1428):

Այսպիսով, Սիմեոն բաբունապետը մատենագրության մեջ հիշվում է Այրիվանեցի, Տաթևացի և Սյունեցի մականուններով: Նա ծնվել և մեծացել է Սյունյաց աշխարհում՝ «գաւառաւ էր Սիւնեցի և բնակութեամբ էր յաթոռոյն Եւստաթէի»[56], գիտական ու հոգևոր մկրտությունը ստացել է Տաթևի հոգևոր դպրատանը և ճիշտ կլիներ նրան ճանաչել Տաթևացի կամ Սյունեցի մականունով, որպիսին նշվում է մի շարք հիշատակարաններում: Սակայն, պայմանավորված Այրիվանքում նրա ունեցած բեղուն գործունեությամբ, բաբունապետը հայտնի է «Այրիվանեցի» անվամբ[57]:

РАБУНАПЕТ СИМЕОН ТАТЕВАЦИ И ЕГО ДЕЯТЕЛЬНОСТЬ В МОНАСТЫРЕ ДЗАГАВАНК

ГАСПАРЯН Р. Р.

Резюме

Известный духовный деятель Армении XIV-XV вв., церковный учитель и наставник Симеон архимандрит Айриванеци получил образование в Татевском монастыре, у известного в средневековой Армении философа и духовного деятеля Григора Татеваци. В 1403–1406 гг. Симеон, получив сан архимандрита, служил вначале при монастыре св. Акопа в Егварде – в духовной семинарии св. Ншан, затем – в монастыре Айриванк, а последние годы жизни провел в монастыре Дзагаванк, став духовным лидером этой известной школы.

Исследование исторических материалов явствует о том, что Симеон Айриванеци ни в Айриванке, ни в Дзагаванке не был предводителем монастырской конгрегации.

[56] ԺԵ դարերի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, մասն Ա, էջ 175:

[57] «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», հ. Ա, կազմեց **Եզանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաբյան Փ.,** Ե., 1965, էջ 478, 541, 1609: